7719

Պրոլետարների բոլոր երկրների, միացե՛ք։

ԱԶՈՎ-ՍԵՎԾՈՎՅԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ II ԿՈՆՖԵՐԵՆՍԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ ՀԿ(Բ)Կ ՅԵՐԿՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՅԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

0122541-Б,
ЗКП2(47.9)
Հ-22

ԱԶՈՎ-ՍԵՎԾՈՎՅԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ «ԲՈԼՇԵՎԻԿ»
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ — 1937

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք։
24 SEP 2006
Проверено 1949 г.
ЗК П2(47.91)
Ъ-22

ԱԶՈՎ-ՍԵՎԾՈՎՅԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՅԱԿԱՆ II ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՎԱՐՈՇՈՒՄԸ

ՀԿ(Բ)Կ ՅԵՐԿՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՅԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

20 NOV 2009
0122.541-Б,
НАУЧНАЯ БИБЛИОТЕКА ТАТРЕСПУБЛИКИ TATARSTAN ИЛМИ КИТАПХАНА

ԱԶՈՎ-ՍԵՎԾՈՎՅԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ «ԲՈԼՇԵՎԻԿ»
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ—1937

7719

17.09.2013

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՅԿ-ՍՍՀ
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

28735.60

ՀԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄ—ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻՆ

Ազով-Սեվծովյան Յերկրային կուսակցական յերկրորդ կոնֆերանսն ամբողջ սրտով հղում է Ձեզ, թանկագին ընկեր Ստալին, մեր սիրելի առաջնորդ յեվ ուսուցիչ, բոցավառ բոլշեվիկյան վողջույն:

Աչալրջության յեվ համոզվածության զգացումով մենք, Ազով-Սեվծովյան բոլշեվիկներս, հավաքվել ենք մեր կուսակցական կոնֆերանսին, վորպեսզի ՀԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեյի Պլենումում արած Ձեր պատմական ցուցումների հիման վրա քննարկենք կուսակցական կազմակերպության մարտական խնդիրները:

Մեր կազմակերպության մեջ անցկացված կուսակցական որգանների ընտրությունները ցուցադրեցին Ազով-Սեվծովյան բոլշեվիկների մեծագույն համախմբվածու-

թյունը ՀԿ(բ)Կ Լենինյան-Ստալինյան Կենտրոնական Կոմիտեյի շուրջը, նրանց խորագույն նվիրվածությունը կոմունիզմի մեծ գործին:

Ազով-Սեվծովյան կուսակցական կազմակերպությունը լի յե կամքով յեվ վճռականությամբ անողոքաբար յեվ սինչեվ վերջը վոչնչացնելու ստոր լրտեսներին, դիվերսանտներին յեվ տեռորիստներին—ճաշիստական հետախուզությունների տրոցկիստական-զինովյեվյան-բուխարինյան գործակալներին:

Ժողովրդի թշնամիների մտադրությունը ջախջախված է: Պրոլետարական դիկտատուրայի սուրն իջավ մարդկության վիժվածքների գլխին, վորոնք դավանանում եյին իրենց ժողովրդին, պատրաստում եյին Խորհրդային Միության պարտությունը, փորձում եյին քայքայել մեր սոցիալիստական Հայրենիքի հզորությունը:

Ազով-Սեվծովյան յերկրային կուսակցական կազմակերպությունը գիտակցում է ամբողջ պատասխանատվությունն այն բանի համար, վոր բարեհոգության յեվ քաղաքական անհոգության հետեվանքով նա թույլ է տվել աղտոտելու իր շարքերը յեվ ղեկավար որգանները կուսակցության յեվ ժողովրդի չարագույն թշնամիներով, վորոնք մի շարք տարիների ընթացքում յերկերեսանալով յեվ դիմակավորվելով տանում եյին հակահեղափոխական քայքայիչ աշխատանք:

Մենք գիտակցում ենք մեր հանցանքն այն բանի համար, վոր մոռացել եյինք կապիտալիստական շրջապատման փաստը մասին յեվ չեյինք կատարում Ձեր ցուցումները թշնամիների դեմ մղվող պայքարի նոր պայմաններում, յերբ թշնամին դիմակավորվում յեվ յերկերեսանում է:

ՀԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեյի անմիջական ոգնությամբ հայտաբերված, մերկացված յեվ ջախջախված են տրոցկիստական-աջ ավազակները, վորոնք դիրքավորվել եյին Ազով-Սեվծովյան կուսակցական կազմակերպության մեջ:

Բայց մենք հիշում ենք, վոր ճաշիստները յեվ նրանց աջ-տրոցկիստական գործակալները Խորհուրդների յերկրի դեմ վարած իրենց պայքարում հատուկ ուշադրություն են դարձնում Ազով-Սեվծովյան յերկրամասին: Դա պարտավորեցնում է մեզ ե՛լ ավելի ուժեղացնել բոլշեվիկյան զգաստությունը:

Զինված Ձեր ցուցումներով յեվ ՀԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեյի փետրվարյան Պլե-

նումի վորոշումներով, Ազով-Սեվծովյան կուսակցական կազմակերպությունն իրեն լրիվ հաշիվ է տալիս, ընկեր Ստալին, այն մասին, վոր կուսակցության առաջ հանգանիկ կլինեն տարվել ամենափոքրիկ ինքնահանգստությամբ: Դեռ վոչ բոլոր թշնամիներն են բռնված յեվ անվնաս դարձված: Մենք չենք մոռանում այն մասին, վոր քանի գոյություն ունի կապիտալիստական շրջապատումը, Քաղիզմը մեր յերկիրն է ուղարկելու իր լրտեսներին ու գործակալներին: Մենք լինելու յենք զգաս ու աչալուրջ:

Ազով-Սեվծովյան բոլշեվիկները մինչեվ վերջը կմաքրեն իրենց շարքերը տրոցկիստական-բուխարինյան գարշահոտ լեշից, կջախջախեն յեվ անողոքաբար կվոչնչացնեն Քաղիզմի բոլոր վարձկան գործակալներին մինչեվ վերջինը, վնասակարները յեվ առանց մնացորդի կվերացնեն վնասարարության հետեվանքները:

Մենք հասատ հիշում ենք Ձեր ցուցումն այն մասին, վոր քաղաքականությունն ու տեսությունն անբաժան են: Ազով-Սեվծովյան կուսակցական կազմակերպությունը զորահավաքում է բանվորներին, կոլխոզային կազակությանը, բոլոր աշխատավորներին՝ հնգամյա պլանն արդյունաբերության բոլոր ճյուղերում հաջողությամբ կատարելու համար, 7—8 միլիարդ փութ հացահատիկի մասին տված Ձեր լոզունգի մարտական իրականացման համար:

Տիրապետելով բոլշեվիզմին, գաղափարապես-քաղաքականապես զինելով իր կադրերին, յերկրամասի կուսակցական կազմակերպությունը կհամախմբի բանվորներին, կոլխոզնիկներին ու բոլոր աշխատավորներին յեվ կտանի դեպի կոմունիզմի նոր հաղթանակների համար մղվող պայքար ու կգլխավորի ընտրությունները համաձայն Ստալինյան Սահմանադրության:

Մեզ սարսափելի չեն թշնամիները—վոչ արտաքին, վոչ ներքին: Մեր կուսակցությունն անպարտելի յե: Ժողովուրդը մեզ հետ է: Դրանումն է բոլշեվիկյան կուսակցության ուժի յեվ հզորության աղբյուրը:

ԿԵՑՑԵ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ (ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ:

ԿԵՑՑԵ ՍԻՐԵԼԻ ԱՌԱՋՆՈՐԴ, ՈՒՍՈՒՑԻՉ ՅԵՎ ԲԱՐԵԿԱՄ ՄԵԾ ՍՏԱԼԻՆԸ:

ԱԶՈՎ-ՍԵՎԾՈՎՅԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ II ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

ՀԿ(բ)Կ ՅԵՐԿՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

I

Լսելով և քննարկելով ընկեր Յեվդոկիմովի զեկուցումը, ՀԿ(բ)Կ Ազով-Սևծովյան Յերկրային II կոնֆերանսն ընդունում է ՀԿ(բ)Կ Յերկրային Կոմիտեի նոր ղեկավարության քաղաքական գիծը ճիշտ և նրա գործնական աշխատանքը՝ բավարար։

Կոնֆերանսը նշում է, որ Ազով-Սևծովյան կազմակերպության մեջ կուսակցության և ժողովրդի շարագույն թշնամիները (Մալինովը, Բերեզինը, Լարինը, Ոգինցովը և ուրիշները) խարեբայությամբ, յերկերեսանությամբ, սողոսկած լինելով Յերկրկոմի

ղեկավարության մեջ, յերկար ժամանակավ ընթացքում յերկրամասում տանում էին հակահեղափոխական քայքայիչ աշխատանք և վնասարարում էին կուսակցական-քաղաքական աշխատանքում։

Այժմ մերկացված և ձերբակալված կուսակցության և ժողովրդի թշնամիները Պյատակովի միջոցով կապված էին հակախորհրդային տրոցկիստական կենտրոնի հետ, նաև աջ դավաճաններ և կապիտալիզմի restավրատորներ Ռիկովի, Բուխարինի, Ա. Պ. Սմիրնովի և ուրիշների հետ։ Աջ դավաճանների և տրոցկիստների հակահեղափոխական ավազակախումբը 1932 թվին նախապատրաստեց և կազմակերպեց կուլակային սաբոտաժ և սաբոտաժի ջախջախումից հետո շարունակեց վնասարարական աշխատանքը՝ կոլխոզների քայքայման ուղղությամբ։

Տրոցկիստական-բուխարինյան ավազակները, վորոնք դիրքավորվել էին յերկրային, քաղաքային և ռայոնական մի շարք կազմակերպություններում, ուրիշ մարզերից ու յերկրամասերից (Ներքին Վոլգայից, Անդրկովկասից) դեպի յերկրամաս էին քաշում իրենց թշնամական կադրերին, խեղդում

եյին կուսակցության թշնամիներին մերկացնող կուսակցական ու անկուսակցական բոլշևիկների ազդանշանները, աշխատավորների անբավականության պրովոկացիա եյին սարքում։ Այդ ավազակախումբն ամեն կերպ ձգտում եր քայքայել մի շարք քաղաքային կազմակերպությունների կուսակցական աշխատանքը (Ռոստով, Տագանրոգ, Շախտ և այլն)։ Տրոցկիստական - աջ հակահեղափոխական բլոկը յերկրամասում հանդիսանում եր բոլոր հակախորհրդային տականքների՝ սպիտակ գվարդիականության մնացորդների, բուրժուական ազդայնականների, հակախորհրդային յեկեղեցական և աղանդավորական խմբավորումների, մենշևիկների, եսերների և ուրիշների կազմակերպող կենտրոնը։

Ֆաշիստական այդ ամբողջ վոհմակն զբաղվում եր լրտեսությամբ արտասահմանյան հետախուզությունների ոգտին, կազմակերպում եր դիվերսիաներ և բանվորների սպանություններ (Ռոստսելմաշ, «Զի 10 տարին», Բոգուրյաևո-Գորնյացկի հանքավարչություն, № 13 շախտերում և այլն), կարմիր բանակայինների և կոլխոզնիկների սպանություններ, գնացքների խորտակումներ մարդկային զոհերով հանդերձ, պատրաստում եր տեռորիստական գործողություններ կուսակցության և յերկրի ղեկավարների դեմ։

Կոնֆերանսը հաստատում է, որ յերկրամասում տեղի ունեցող թշնամական աշխատանքի աղաղակող փաստերը յերկար ժամանակ չեյին մերկացվում կուսակցական կազմակերպություններում յեղած բարեհոգության և զգաստության կորստի հետևանքով, նաև նրա համար, որ Յերկրկոմ թափանցած ժողովրդի թշնամիները խեղդում եյին շարքային կոմունիստների ազդանշանները։ Տրոցկիստական-աջ բլոկի մերկացումը տեղի ունեցավ միայն ՀԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեի միջամտության հետևանքով և ՀԿ(բ)Կ Յերկրկոմի ղեկավարության փոխումից հետո։

Կոնֆերանսը հավաստում է Կենտկոմին, որ յերկրամասի բոլշևիկները չեն խնայի տրոցկիստական-բուխարինյան լրտեսներին ու մարդասպաններին, ճապոնա-գերմանական ֆաշիզմի գործակալներին և մինչև վերջը կոչնչացնեն ամբողջ հակահեղափոխական կեղտը, ինչպես ել նա դիմակավորվի և ինչքան ել խորը թաղնվի իր ֆաշիստական հակահեղափոխական ընդհատակում։

Կոնֆերանսը նշում է, որ հակառակ ժողովրդի թշնամիների քայքայիչ աշխատանքի, յերկրամասը հաշվետու ժամանակամիջոցում Կենտկոմի և ընկեր Ստալինի ղեկավարությամբ լուրջ հաջողություններ է ձեռք բերել տնտեսական և կուլտուրական շինարարության գործում։ Աճել է ծանր ինդուստրիան, շահագործման են հանձնված մի շարք նոր ձեռնարկություններ, վերակառուցված են յերկրամասի խոշորագույն գործարանները։ ստախանովյան շարժման ծավալման հիման վրա աճել է աշխատանքի արտադրողականությունը։ լայնացել է ապրանքաշրջանառությունը, բարձրացել է աշխատավորների կյանքի նյութական ու կուլտուրական մակարդակը։ Սոցիալիստական գյուղատնտեսության հետագա վերելքն ակնհայտ է։ Ֆաշիստական-տրոցկիստական-բուխարինյան պլանների ջախջախումը, պլաններ, որոնք ուղղված եյին կոլխոզների և ՄՏ կայանների քայքայման կողմը, հանդիսանում է կոլխոզային կարգերի մեծագույն կենսունակության և հզորության ամենավառ վկայությունը։

Կենֆերանսը նշում է, որ ՀԿ (բ) Կ Յերկրային Կոմիտեյի նոր ղեկավարությունը

բոլշևիկորեն զորահավաքեց յերկրամասի բոլոր կուսակցական և անկուսակցական բոլշևիկներին մերկացնելու և անողոքաբար ջախջախելու ֆաշիզմի գործակալներին, ՁԱՍ-արարներին, դիվերսանտներին, լրտեսներին ու մարդասպաններին՝ ՁԱՍ-արարության հետևանքները վերացնելու համար։ Յերկրամասի բոլշևիկների զգաստության բարձրացման և քաղաքական ակտիվության վերելքի հետևանքով, զինված Կենտկոմի փետրվարյան Պլենումի վորոշումներով և ընկեր Ստալինի պատմական ցուցումներով, Ազով-Սևծովյան կուսակցական կազմակերպությունը կործանիչ հարված հասցրեց ֆաշիզմի մեքենայություններին, վորը մեծ հույսեր եր դնում Ազով-Սևծովյան յերկրամասում գործող իր լրտեսների վրա։ Խորտակվեցին ֆաշիստական գործակալության այն փորձերը, վորոնց նպատակն եր կազակության միջև դժգոհություն առաջացնել խորհրդային իշխանության դեմ խորհրդային կազակության հարցի վերաբերյալ կուսակցության ու կառավարության վորոշումների սաբոտաժի և թշնամական խեղաթյուրումների միջոցով։ Ժողովրդի յերդվյալ թշնամիներին չհաջողվեց և յերբեք չի հաջողվի

հենարան և համակրանք գտնել կոլխոզային գյուղացիության միջավայրում, գյուղացիության, որն անցել է կոլխոզային կարգերի համար տարվող պայքարի մեծ ճանապարհը և ընդմիշտ կանգնել է սոցիալիզմի կարմիր դրոշի տակ։

Կոնֆերանսն ընդգծում է, որ Խորհրդային Միության կապիտալիստական շրջապատման փաստը կոմունիստական հասարակության բոլոր կառուցողներից պահանջում է անխոնջ զգաստություն և բացառիկ բարձր հեղափոխական աչալրջություն։ Պետք է հիշել, որ քանի գոյություն ունի կապիտալիստական շրջապատումը՝ իմպերիալիստական պետությունները և առաջին հերթին ֆաշիստները, մեր յերկրի թիկունքն են ուղարկելու իրենց լրտեսներին, դիվերսանտներին, ֆաշարարներին և տեռորիստներին։ Դրա մոռացումը հանդիսանում է հանցագործություն կուսակցության և յերկրի հանդեպ, սոցիալիզմի շահերի հանդեպ։

Կոնֆերանսը նշում է մի շարք լուրջ թերություններ ՀԿ(բ)Կ Յերկրկոմի գործնական աշխատանքում.

ա) Յերկրկոմի բաժինները դեռ սերտ կապ չեն հաստատել քաղաքային և ռայոնական

կուսակցական կազմակերպությունների հետ, չեն ապահովել ամենօրյա կոնկրետ ղեկավարություն տեղերին.

բ) մինչև վերջ չի ջախջախված ՀԿ(բ)Կ Կենտկոմի փետրվարյան Պլենումի կողմից դատապարտված կուսակցական պրոպագանդի, ագիտացիայի և մամուլի թերագնահատումը։ Յերկրամասում պրոպագանդի և ագիտացիայի դրությունը մնում է անբավարար և Յերկրկոմի կողմից այդ գործի ղեկավարությունը մնում է անբավականաչափ.

գ) ձգձգվում է ՀԿ(բ)Կ շարքերից հեռացվածների բողոքների քննարկումը։ Կոնֆերանսը դա ավելի ևս անթույլատրելի յե համարում նրա համար, որ հեռացվածների մի մասն կան մարդիկ, որոնց ժողովրդի թշնամիները կուսակցությունից հեռացրել են պասսիվության պատրվակով.

դ) միանգամայն անբավարար են ֆասարարության հետևանքների վերացման արդյունքները, հատկապես արդյունաբերության մեջ և տրանսպորտում. յերկրամասի հիմնական ձեռնարկությունները, մասնավորապես ածխային արդյունաբերությունը, մինչև այժմ սաստիկ հետ են մնում իրենց արտադրական պլանների կատարման գործում.

ե) ձեռք չեն առնված բավարար միջոցներ յերկրային տնտեսական, հատկապես հողային որգանները կադրերով ամրապնդելու և աշխատանքը վերակառուցելու համար։

Կոնֆերանսը պարտավորեցնում է ՀԿ(բ)Կ Յերկրային Կոմիտեին արագորեն և վճռականապես ուղղել այդ թերությունները։

II

1. ՀԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեի փետրվարյան Պլենումը մշակեց կուսակցական աշխատանքի վերակառուցման մարտական ծրագիր համաձայն այն նոր խնդիրների, որոնք դրված են յերկրի առաջ Ստալինյան Սահմանադրության մուծման կապակցությամբ։

Կոնֆերանսը պարտավորեցնում է Յերկրային Կոմիտեին կուսակցական յերկրային կազմակերպության ամբողջ հետագա աշխատանքում ապահովել բոլշևիզմի տիրապետման, կադրերի գաղափարական-քաղաքական կոփման, քաղաքական անհոգության և դյուրահավատության վերացման մասին ընկեր Ստալինի լոզունգի գործնական իրագործումը։ Կուսակցական կազմակերպությունների աշխատանքի հիմնական մեթոդը պետք

29735.60

է լինի բոլշևիկյան համարձակ քննադատության և ինքնաքննադատության ծավալումը՝ առանց անձի խորության։

2. Անհրաժեշտ է կուսակցական կազմակերպությունների աշխատանքի ամբողջ պրակտիկայում լիովին վերականգնել մարքսիզմի-լենինիզմի պրոպագանդի և քաղաքական ագիտացիայի նշանակությունը։

Կուսակցության պատմությունն ուսումնասիրող խմբակների աշխատանքի հիմքում պետք է դրված լինեն ՀԿ(բ)Կ պատմության դասագիրք կազմողներին տված ընկեր Ստալինի ցուցումները։ Ուսանողներին պետք է խորապես բացատրել, որ բոլշևիկների կուսակցությունն աճել, դաստիարակվել և կոփվել է դաժան, անհաշտ և անողոք պայքարում՝ ընդդեմ հակաբոլշևիկյան հոսանքների և խմբակների, որ այդ պայքարը հանդիսացել է կապիտալիստական հասարակակարգի ջախջախման, սոցիալիստական պետության ստեղծման և ամրացման գլխավոր պայմանը, որ կոմունիզմի կառուցման գործում նոր հաղթանակների հասնելու համար անհրաժեշտ է վերջնականապես վոչնչացնել կուսակցության ու ժողովրդի թշնամիներին—տրոցկիստներին, [illegible]կանների,

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ-ում ССР
ԱՄ. Ա. Մ[illegible]

աշերին և այլ յերկերեսանիներին, դավաճաններին ու մատնիչներին։

3. Կուսակցական լուսավորության ցանցը կազմակերպել համաձայն ՀԿ(բ)Կ Կենտկոմի ցուցումների։ Ամենորյա հսկողություն սահմանել դասավանդության գաղափարական կայունության և ունկնդիրների կողմից ծրագրերի յուրացման աստիճանի վրա։ Կուսակցական կոմիտեների քարտուղարները լիովին և անմիջական պատասխանատվություն են կրում կուսակցական պրոպագանդի դրության համար և պարտավոր են անձամբ ղեկավարել կուսակցական դպրոցների և խմբակների աշխատանքը։

Անցկացնել պրոպագանդիստների կազմի ստուգում, հաստատելով նրանց կուսակցական կոմիտեների բյուրոներում։ Անհրաժեշտ է վերացնել պրոպագանդիստական կադրերի աղտոտվածությունը յերկերեսանիներից, թշնամական տարրերից։ Պրոպագանդիստական աշխատանքի համար պետք է ընտրվեն քաղաքականապես ստուգված և գաղափարապես-տեսականապես պատրաստված ընկերներ։ Կուսակցական ակտիվը պետք է լայնորեն ոգտագործվի պրոպագանդիստական աշխատանքում։

Առաջարկել Յերկրկոմին ապահովել պրոպագանդիստների վորակավորման բարձրացումը կուսակցական կուրսերում։

4. Կոնֆերանսը պարտավորեցնում է բոլոր կուսկազմակերպություններին վճռականապես լավացնել կուսակցական կաբինետների աշխատանքը, ապահովելով դրանք համապատասխան գրականությամբ, նյութերով և դիտողական ձեռնարկներով, կազմակերպել պրոպագանդիստների սեմինարներ, ինչպես նաև կարգավորել կոլեկտիվ և անհատական կոնսուլտացիա պրոպագանդիստների և կուսլուսավորության դպրոցների ունկնդիրների համար։

5. Քաղաքական ագիտացիան մասսաների մեջ միշտ հանդիսացել է ամենափորձված զենքն աշխատավորներին Լենինի-Ստալինի կուսակցության շուրջը համախմբելու գործում, նրա լոզունգների և վորոշումների հաջող իրագործման համար մասսաներին զորահավաքելու գործում։ Ստալինյան Սահմանադրության մուծման կապակցությամբ, յերկրի քաղաքական կյանքի շրջադարձն ել ավելի բարձր մակարդակի յե հասցնում քաղաքական ագիտացիայի նշանակությունը։

Ագիտացիայի դրության արժատական բարելավման նպատակով անհրաժեշտ է.

ա) Վորպեսզի ագիտատորներ ընտրել քաղաքականապես պատրաստված ընկերների, վորոնք ժողովրդականություն են վայելում բանվորների և կոլխոզնիկների միջև, վորոնք ընդունակ են ճիշտ և ժամչելի ձևով մասսաների գիտակցությանը հասցնել կուսակցության վորոշումներն ու լոզունգները.

բ) ապահովել ձեռնարկություններում ագիտկոլեկտիվների ստեղծումը և նրանց հաջող աշխատանքը, այդ կոլեկտիվների անմիջական ղեկավարությունը դնելով կուսակցական կոմիտեների քարտուղարների վրա.

գ) հատուկ ուշադրություն դարձնել ընթերցիչ-զրուցողների, ստորին բանվորական ու կոլխոզային ագիտատորների աշխատանքի վրա, վորոնք կատարում են կուսակցության քաղաքականությունը, յերկրի կյանքի և նրա սահմաններից դուրս յեղած կարևորագույն դեպքերը մասսաներին բացատրելու պատավոր խնդիրը։

6. Իշխանության գերագույն որգանների առաջիկա ընտրությունների կապակցությամբ ակտիվանում են ջախջախված հակահեղափոխական ուժերի բոլոր բեկորները, մասնավորապես տերտերական-աղանդավորական տարրերը։ Այդ կապակցությամբ հատկապես մեծ նշանակություն է ստանում հակակրոնական պրոպագանդը։ Կոնֆերանսը վճռաբար դատապարտում է այդ աշխատանքի մոռացումը, վորի հետևանքով յերկրամասում հակակրոնական պրոպագանդը յերեսի վրա յե թողնված։ Բոլոր կուսակազմակերպությունները հակակրոնական աշխատանքի համար պետք է ընտրեն լավագույն, վորակավորված կադրեր։ Կոնֆերանսն առաջարկում է Յերկրկոմին բոլոր միջոցները ձեռք առնել ապահովելու հակակրոնական աշխատանքն անհրաժեշտ գրակությամբ և դիտողական ձեռնարկներով։

7. Նշելով, վոր Յերկրկոմ սողոսկած ժողովրդի թշնամիները վիժեցնում եյին Ստալինյան Սահմանադրության բացատրության և պրոպագանդի գործը ժողովրդական լայն մասսաներում, կոնֆերանսը պարտավորեցնում է բոլոր կուսակցական կազմակերպություններին ապահովել, վորպեսզի բոլոր բանվորներն ու կոլխոզնիկները հանգամանորեն ծանոթանան սոցիալիզմի յերկրի Հիմնական Որենքի հետ, կազմակերպելով

գրույցներ, դասախոսություններ, աշխատավորների համար ստեղծելով ԽՍՀՄ Սահմանադրության ուսումնասիրման խմբակներ և այդ աշխատանքը տանելով առաջին հերթին խորհուրդների, պրոֆմիությունների, կոմյերիտմիության, կամավոր ընկերությունների և այլնի միջոցով։

8. Ընկեր Ստալինի ցուցումների հիման վրա անհրաժեշտ է ձեռք առնել բոլոր միջոցները, վորպեսզի կուսակցական ակտիվը և մեր բոլոր կուսակցական կադրերը կողմորոշվեն միջազգային քաղաքականության հարցերում։ Այդ նպատակով վորակավորված ընկերների ուժերով քաղաքներում, ռայոններում, ձեռնարկություններում ու ՄՏ Կայաններում կազմակերպել սիստեմատիկ դասախոսություններ, լայնորեն ոգտագործելով մամուլն ու ռադիոն։

9. Կուսակցության անդամներին սիստեմատիկորեն ծանոթացնել թշնամական հետախուզության լրտեսական, դիվերսիոն, ջասարար-տերորիստական գործունեության մեթոդների հետ, վորպեսզի մեր կուսակցական ընկերները կարողանան ել ավելի արագ և հաջողությամբ ճանաչեն, հայտաբերեն, մերկացնեն, չախչախեն ու արմատահանեն ֆաշիզմի լրտեսներին — ճապոնա-գերմանական, տրոցկիստական և բուխարինյան ավազակներին։

10. Կոնֆերանսը գտնում է, վոր «Մոլոտ» թերթի խմբագրությունը դեռ լիովին չի ուղղել այն լուրջ սխալները, վորոնք հանդում եյին կուսակցության և ժողովրդի թշնամիների մերկացման գործում յեղած բոլշևիկյան սրության և զգաստության բացակայությանն ու կուսակցական-քաղաքական հարցերի մոռացմանը։

«Մոլոտ»-ի խմբագրությունը սերտ կապ չի հաստատել բանթղթակիցների և գյուղթղթակիցների հետ, չի ապահովել նրանց սիստեմատիկ դաստիարակությունը։ Միանգամայն անբավարար է դրված ստախանովականներին, ինժեներա-տեխնիկական աշխատողներին, կուսակցական, խորհրդային և տնտեսական ակտիվին թերթինաշխատակցելու համար ներգրավելու գործը։ Խմբագրության ապարատում տեղի ունի աղտոտվածություն։

Թերթի կարևորագույն խնդիրը հանդիսանում է մարքսիստական-լենինյան ուսմունքի պրոպագանդը, բոլշևիզմի տիրապետության վերաբերյալ ընկեր Ստալինի լոզունգի

պրակտիկ իրագործման համար տարվող պայքարը, մասսաների ակտիվության զորահավաքը ժողովրդի թշնամիներին, ֆաշնա-գերմանական ֆաշիզմի գործակալներին լիովին չախչախելու և վոչնչացնելու համար, վնասարարության հետևանքների արագ և վերջնական վերացման համար։

Ամրապնդել «Մոլոտ»-ի խմբագրության ապարատը քաղաքականապես ստուգված, վորակյալ ընկերներով։

11. ՀԿ (բ) Կ քաղաքային և ռայոնական կոմիտեների ճնշող մեծամասնության կողմից մամուլի աշխատանքի նկատմամբ ղեկավարության բացակայության հետևանքով յերկրամասում թերթերի աշխատանքը միանգամայն անբավարար է։ Թերթերը չեն վերակառուցվել համաձայն Կենտկոմի փետրվարյան Պլենումի վորոշման և ընկեր Ստալինի ցուցումների։ Բացառապես վատ է դրված կուսակցական-քաղաքական աշխատանքի լուսաբանումը, Ստալինյան Սահմանադրության պրոպագանդը, կարևորագույն քաղաքական դեպքերի ինֆորմացիան։

Թույլ է թերթերի խմբագրությունների կապը մասսաների, բանգյուղթղթակիցների

հետ։ Այն բանի հետևանքով, վոր շատ թերթերի գլխին շարունակում են մնալ յերկրորդական աշխատողներ, վորոնք առանց այն ել կուսակցական կոմիտեների ոգնությունը չեն ստանում, թերթերի եջերում կան քաղաքական ամենակոպիտ խեղաթյուրումներ։ Դիմակավորված ատրոցկիստական և բուխարինյան ավազակները թափանցած լինելով մամուլի միքանի որգաններ «վրիպակների» և տեխնիկական անփութությունների պատրվակի տակ տանում են իրենց քայքայիչ աշխատանքն՝ ոգտագործելով կուսակցական ղեկավարների բերանբացությունն ու բարեհոգությունը։

Կոնֆերանսը միանգամայն անհանդուրժելի յե համարում մի շարք կուսակցական կոմիտեների լիբերալ վերաբերմունքը դեպի նման խեղաթյուրումները։ Այդ լիբերալիզմն ել ավելի հանցագործ է, մանավանդ վոր, ինչպես հայտնի յե, ժողովրդի թշնամիներն իրենց հակահեղափոխական գործունեության համար ոգտագործում եյին մի քանի թերթերի խմբագրությունները (Տագանրոգ, Կրասնոդար, Նովորոսիյսկ և այլն)։

Կոնֆերանսը հիշեցնում է ամբողջ կուսակցական կազմակերպությանը, վոր տապ-

գիր խոսքի թերագնահատումը հանդիսանում է հեռացում բոլշևիկյան տրադիցիաներից։ Քաղաքային և ռայոնական կոմիտեները պետք է ապահովեն իրենց թերթերի աշխատանքի ամենորյա ղեկավարությունը, ամրացնելով խմբագրությունները գաղափարապես կոփված և քաղաքականապես պատրաստված աշխատողներով։ Լուրջ ուշադրություն պետք է դարձնել բազմատիրաժների և պատի թերթերի աշխատանքի ղեկավարությանը, որոնք մինչև վերջին ժամանակ մնում են յերեսի վրա ձգված տեղամաս և, կուսակցական կազմակերպությունների թափթփվածության և անհոգության դեպքում, կարող են ոգտագործվել հակախորհրդային ֆնասարար տարրերի կողմից հակահեղափոխական պրոպագանդի համար։

III

1. Կենտկոմի փետրվարյան Պլենումի վորոշումների համաձայն անցկացված կուսակցական որգանների ընտրությունները յերկրային կուսակցական կազմակերպության մեջ անցան զաղափարական բարձր մակարդակով, կուսակցական մասսաների աճած քաղաքական ակտիվության պայմաններում

և բոլշևիկյան քննադատության ու ինքնաքննադատության վերելքի պայմաններում։ Ընտրությունների հետևանքով կուսակազմակերպությունների ղեկավարության գլուխն անցան նոր, կուսակցության գործի համար տարվող պայքարում, գործնական աշխատանքում աճած և կոփված ընկերներ։ Քաղաքային և ռայոնական կոմիտեները պետք է ապահովեն կոնկրետ ամենորյա ոգնություն և սիստեմատիկ ղեկավարություն կուսկոմների նորընտիր քարտուղարների և կուսակազմակերպիչների նկատմամբ, որոնք կուսակցական ղեկավար աշխատանքի փորձ չունեն։ Անհրաժեշտ է նրանց սովորեցնել անմիջականորեն ձեռնարկության մեջ, ցեխում, թե ինչպես պետք է գործնականապես դնել կուսակցական աշխատանքը։

2. Համաձայն Կենտկոմի փետրվարյան Պլենումի վորոշման կոնֆերանսը պարտավորեցնում է Յերկրկոմին՝ սկզբնական կուսկազմակերպությունների ղեկավարներին սովորեցնել յերկրային դասընթացներում, որոնք ստեղծվում են Ռոստովում, իսկ քաղաքային և ռայոնական կոմիտեներին՝ անցկացնել լրացուցիչ միջոցառումներ կուսկազմակերպիչների և կուսակցական կոմիտե-

ների անդամների համար դասընթացներ, սեմինարներ կազմակերպելու վերաբերյալ։

3. Անհրաժեշտ է բարձրացնել հրահանգիչների դերը կուսակցական ապարատի աշխատանքում։ Հրահանգիչը պետք է ամենորյա, կենդանի ոգնություն ցույց տա սկզբնական կուսակցական կազմակերպություններին՝ կուսակցական-քաղաքական աշխատանքի դրվածքում։

Նշելով մանր կուսակցական կազմակերպությունների շարունակվող թերագնահատումը, կոնֆերանսն առաջարկում է բոլոր քաղաքային և ռայոնական կոմիտեներին ապահովել սիստեմատիկ ղեկավարություն այդ կազմակերպությունների նկատմամբ։

4. Ընդծելով կուսակցական փաստաթղթերի վերափոխանակման բացառիկ նշանակությունը, կոնֆերանսն առաջարկում է Ցերկբկոմին ապահովել այդ կարևորագույն աշխատանքի ժամանակին և ճիշտ անցկացումը, վոր լիովին մերկացվեն և ջախջախվեն դեռևս չհայտաբերված տրոցկիստական-բուխարինյան ավազակները և նրանց արբանյակները։

5. Ֆաշիզմի կղվելի գործակալներ Ցերոֆիցկին, Մակարենկոն և ուրիշները, վորոնք

յերկար ժամանակի ընթացքում գործում էին յերկրային կոմյերիտական կազմակերպության մեջ, իրենց թշնամական ջանքերն ուղղում էին կոմյերիտմիությունը կուսակցությունից կտրելուն, կոմյերիտմիությունը կուսակցությանը հակադրելուն, կոմյերիտմիության գլխավոր խնդիրը—յերիտասարդության ու մանուկների կոմունիստական դաստիարակությունը վիժեցնելուն։

Բոլոր կուսակցական կազմակերպությունները պետք է կոնկրետ և ամենորյա ոգնություն ցույց տան կոմյերիտական կազմակերպություններին, ֆաբրիկաների հետևանքների վերացման, աճող սերնդի կոմունիստական դաստիարակության գործի ճիշտ դրվածքի, արտամիությենական յերիտասարդության, մասնավորապես կազակային յերիտասարդության միջև աշխատանքն ուժեղացնելու գործում։

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել կոմյերիտմիության աշխատանքին դրպրոցում, պիոներների և յերեխաների միջև տարվող աշխատանքի կարգավորմանը։ Անհրաժեշտ է ապահովել կոմյերիտականների և յերիտասարդության լայն ներգրավումը պաշտպանության աշխատանքի մեջ։

Կոնֆերանսը կուսակցական կազմակերպությունների առաջ որպես կարևորագույն խնդիր դնում է ՀԼԿՑԵՄ Կենտկոմի պլենումի որոշումների հիման վրա անցկացվող կոմյերիտական օրգանների հաշվետվությունների ու ընտրությունների ղեկավարման խնդիրը։

6. Յերկրամասում պրոֆմիությունների դրությունը և աշխատանքը միանգամայն անբավարար է։ Ժողովրդի թշնամիները (Սոկոլովան և ուրիշները) վնասարարորեն վիժեցնում էին աշխատանքի պաշտպանության, անվտանգության տեխնիկայի, բանվորների կուլտուր-կենցաղային պահանջների սպասարկման վերաբերյալ աշխատանքը։

Յերկրամասի կուսակցական կազմակերպությունը պարտավոր է բոլոր միջոցները ձեռք առնել վերացնելու պրոֆմիությունների յուրահատուկ ճգնաժամը, որի եությունն այն է, որ պրոֆմիությունների ղեկավար օրգանները հետ են մնում սոցիալիստական շինարարությունից և կտրված են պրոֆմիութենական մասսայից։ Կուսակցական կազմակերպությունները պետք է գլխավորեն պրոֆօրգանների հաշվետվություններն ու ընտրությունները և նրանց

անցկացման ընթացքում, լայնորեն ծավալված քննադատության և ինքնաքննադատության հիման վրա, ապահովեն հակահեղափոխական-տրոցկիստական-աջ տրեդյունիոնիստական տարրերի լրիվ մերկացումը և ջախջախումը, որոնք դեռ չեն մերկացված յերկրամասի պրոֆկազմակերպություններում։ Պրոֆմիությունների ղեկավարության համար պետք է առաջ քաշել ստուգված, բանվորական միջավայրում հեղինակավոր մարդկանց, որոնք ընդունակ են գործնականում իրագործելու կուսակցության քաղաքականությունը։

7. Ակումբների, սոցկուլտուրայի տների, կարմիր անկյունների, խրճիթ ընթերցարանների դրությունը յերկրամասում միանգամայն անբավարար է։ Դա առանձնապես անթույլատրելի է յերկրի քաղաքական կյանքի շրջադարձի պայմաններում, յերբ մասսաների ակտիվության ընդհանուր աճման հետ հասարակական-քաղաքական կյանքին մասնակցելու համար բարձրանում են աշխատավորների նոր շերտեր։

Կոնֆերանսը պատրաստեցնում է բոլոր կուսակցական կազմակերպություններին ապահովել քաղաքական-լուսավորական հիմ-

նարկների, (ակումբների, սոցկուլտուրայի տների, գրադարանների ինժեներա-տեխնիկական աշխատողների ակումբների, թատրոնների, կինոների, ռադիոների և այլնի) աշխատանքի վճռական բարելավումը։

Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել բանվորական և կոլխոզային ինքնագործունեության զարգացմանը։ Ցուրաքանչյուր կուսակցական կազմակերպության պատվի գործը պետք է լինի մասսաների միջև կուլտուրական-քաղաքական աշխատանքի որինակելի դրվածքը և ժողովրդական տաղանդների ամենալայն զարգացումը, վորոնք մեզ մոտ անսպառ են։

8. Կուլտուրական ֆրոնտում գործող ժողովրդի թշնամիները պակաս վնաս չհասցրին յերկրամասի բարձրագույն ուսումնական հաստատությունների, ինստիտուտների և դպրոցների աշխատանքին (Ռոստովի և Կրասնոդարի մանկավարժական ինստիտուտներ, գյուղատնտեսության եկոնոմիկայի ինստիտուտ, Նովոչերկասկի ինդուստրիալ ինստիտուտ և այլն)։

Անհրաժեշտ է ձեռք առնել բոլոր միջոցներն արագորեն և վճռականապես վերացնելու վնասարարության հետևանքներն այդ կարևորագույն տեղամասում և դասավանդման աշխատանքի համար ընտրել ամենից ավելի ստուգված և վորակավորված մարդկանց։

Կոնֆերանսը վճռականապես դատապարտում է դպրոցի հարցերի մոռացումը կուսակցական կազմակերպությունների կողմից։ Սխող սերդնի դաստիարակությունը հանդիսանում է կուսակցական կազմակերպությունների կարևորագույն բոլշևիկյան պարտականությունը։

9. Արձանագրելով լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության հաջողությունները յերկրամասում, կոնֆերանսն առաջարկում է Յերկրկոմին ապահովել բոլոր պայմաններն Ադիգեյի ինքնավար մարզի և ազգային ռայոնների հետագա տնտեսական ու կուլտուրական զարգացման համար, հատուկ ուշադրություն դարձնելով բնիկ բնակչությունից կուսակցական, խորհրդային և տնտեսական կադրերը ընտրելու և աճեցնելու վրա։

10. Չնայած ԽՍՀՄ վրա ֆաշիստական յերկրների հարձակման հետևեմբ ուժեղացող վտանգին և նրանց կատաղի պատրաստությանը պատերազմին, կուսակցական կազմակերպությունները մինչև այժմ հար-

կավոր ուշադրություն չեն դարձնում պաշտ-
պանության աշխատանքին։

Կոնֆերանսն առաջարկում է ՀԿ(բ)Կ Յեր-
կրկոմին և քաղկոմներին ապահովել և կազ-
մակերպել քաղաքացիական և զինվորական
կուսակցական կազմակերպությունների կու-
սակցական-քաղաքական աշխատանքի փոր-
ձի փոխանակումը, լավացնել բանվորների
և կոլխոզնիկների շեֆությունը Կարմիր Բա-
նակի զորամասերի վրա և անհրաժեշտ ոգ-
նություն ցույց տալ յերկրամասի տերիտո-
ռիայում տեղավորված զորամասերին, հատ-
կապես տերիտորյալ զորամասերին, բավ-
արարելով նրանց կուլտուրական-կենցաղա-
յին պահանջներն ու կարիքները։ Քաղոր-
գանները ու ՀԿ(բ)Կ ռայկոմները պետք է ա-
պահովեն հրամանատարական-քաղաքական
կազմի ակտիվ մասնակցությունը՝ զորամա-
սերի տեղավորման ռայոնների բնակչու-
թյան միջև տարվող մասսայական-քաղա-
քական աշխատանքում։ Անհրաժեշտ է լիո-
վին վերացնել անգրագիտությունն ու կիսա-
գրագիտությունը զորակոչիկների կոնտին-
գենտների միջև։

11. Վերացնելով ժողովրդի թշնամիների
վնասարարության հետևանքները ՊԱՀԸ-

Ավիաքիմի աշխատանքի ասպարեզում, ան-
հրաժեշտ է ամեն կերպ ուժեղացնել պաշտ-
պանության աշխատանքը բնակչության մի-
ջև (հրաձգային սպորտ, հակաոդային և հա-
կաքիմիական պաշտպանություն և այլն),
հատուկ ուշադրություն դարձնելով աերո-
կլուբների զարգացման և աշխատանքիվրա։

Մեր յերկրամասի պայմաններում մեծ
նշանակություն ունի վորոշիլովյան հեծյալ-
ների շարժումը։ Ապահովելով աշխատավոր-
ների, հատկապես կազակային յերիտասարդ-
ության լայն ներգրավումն այդ շարժման
մեջ, անհրաժեշտ է պայքարել հանդիսավո-
րության և աղմկարարության ամենաչնչին
արտահայտության դեմ, վորպեսզի վորոշի-
լովյան հեծյալների ակումբները լրջորեն ձեռ-
նարկեն հեծնելու ձիերի աճմանը և ձիա-
սպորտի ուսուցմանը։

Մասսաների մեջ մտցնելով ֆիզկուլտու-
բայի և սպորտի բոլոր տեսակները, հարկա-
վոր է աշխատավորների, հատկապես յերի-
տասարդության մեջ զարգացնել խորհրդա-
յին մարդկանց լավագույն գծերը—անձնու-
րաց նվիրվածություն իր սոցիալիստական
հայրենիքին, տոկունություն, արիություն
և խիզախություն։

1. Խորհուրդների աշխատանքը յերկրամասում լուրջ կերպով յերեսի վրա յե թողնված։ Ժողովրդի թշնամիները (Լարին, Կասիլով, Կատենև, Ովչիննիկով և ուրիշները) անց եյին կացնում վնասարարություն խորհրդային աշխատանքում, ամեն ձևերով ու միջոցներով կորելով խորհրդային որգանները լայն աշխատավոր մասսաներից, արմատացնելով անորինություն, չարաշահումներ, բյուրոկրատիզմ և քաշքշուկ։

Տրոցկիստական ավազակների քայքայիչ աշխատանքը տարվում եր նաև քաղաքների բնակարանային-կոմունալ շինարարության միջոցառումների վիժեցման ուղղությամբ և այլն։ Բանվորական մի շարք կարևորագույն կենտրոնների վրա (Շախտ և այլն) վոչ մի ուշադրություն չեր դարձվում։ Վերացնելով վնասարարության հետևանքները, կուսկազմակերպությունները պարտավոր են ապահովել Խորհուրդների աշխատանքի ամենաարագ և արմատական վերակառուցումը։

2. Ազով-Սևծովյան կուսակցական կազմակերպությունը պետք է գլխավորի Խորհուրդների ընտրությունների նախապատրաստությունը համաձայն Ստալինյան Սահմանադրության, ընտրություններին անշեղորեն անցկացնի կուսակցության քաղաքականությունը, դրանով ապահովելով բանվոր դասակարգի դիկտատուրայի հետագա ամրապնդումը։

Խորհրդային որգանների աշխատանքի ամբողջ պրակտիկայում պետք է հատուկ զգայուն հոգացողություն հայտաբերել մասսաների կարիքների և պահանջների, նրանց նյութական բարեկեցության և կուլտուրական մակարդակի հետագա բարձրացման վերաբերյալ։

Անհրաժեշտ է հաստատորեն կենսագործել Կենտկոմի փետրվարյան Պլենումի վորոշումները և ընկեր Ստալինի ցուցումները քաղաքների թերաղնահատումը վերացնելու մասին։ Կոնֆերանսն ընդգծում է, վոր սոցիալիստական քաղաքները յեղել են և մնում են քաղաքական և կուլտուրական կենտրոններ, սոցիալիզմը կառուցող կադրերի դաստիարակության և աճեցման բազա։

3. Կոնֆերանսն առաջարկում է յերկրամասի բոլոր կուսկազմակերպություններին լավացնել առևտրական կազմակերպությունների աշխատանքի ղեկավարությունը, զտե-

լով նրանց թշնամական, հանցագործ տարրերից։ Կուսակազմակերպությունները պետք է գլխավորեն կոոպերատիվ որդանների առաջիկա հաշվետվություններն ու ընտրությունները։

Կոնֆերանսն առանձնապես ընդգծում է յերկրամասում կոլխոզային առևտրի հետագա ծավալման խնդիրները։

V

1. Վնասարարության հետևանքների դանդաղ վերացումը տնտեսության ասպարեզում հանդիսանում է այն բանի հետևանք, որ տնտեսական ղեկավարները մեծ մասամբ դեռ չեն վերակառուցվել համաձայն Կենտկոմի փետրվարյան Պլենումի որոշումների և ընկեր Ստալինի ցուցումների, իսկ կուսակազմակերպությունները թուլացրել են իրենց ուշադրությունը դեպի տնտեսական հարցերը։

2. Արձանագրելով, որ արդյունաբերության կարևորագույն ճյուղերը չեն կատարել արտադրական պլանները 1937 թվի առաջին կիսամյակում, կոնֆերանսը պարտավորեցնում է կուսակազմակերպություններին ձեռք առնել բոլոր միջոցները՝ արագորեն վերացնելու ձեռնարկությունների անթույլատրելի հետամնացությունը և ապահովել ոչ միայն արտադրական պլանների կատարումը, այլև գերակատարումը, որակական բարձր ցուցանիշներով հանդերձ։

3. Տրոցկիստական ավազակները հատուկ ջանքեր եյին գործադրում ստախանովյան շարժման քայքայման ուղղությամբ, ամեն կերպ ստեղծելով արգելքներ ստախանովականների համար և վարկաբեկելով նրանց աշխատանքը։ Անհրաժեշտ է դատապարտել շատ տնտեսվարների և կուսակցական ղեկավարների տենդենցը՝ վնասարարության հետևանքների վերացման ծանրությունը փոխադրելը ստախանովականների վրա։ Վերացնելով վնասարարության հետևանքները, կուսակազմակերպությունները պարտավոր են գլխավորել սոցիալիստական մրցությունն ու ստախանովյան շարժումը, հասնելով ստախանովականների շարքերի հետագա լայնացման։

4. Կոնֆերանսը նշում է, որ Վորոշիլովի անվան յերկաթուղու տնտեսական ղեկավարությունը և քաղբաժինը թույլ են զորահավաքում տրանսպորտի աշխատողներին՝ ժողովրդի թշնամիների (Լիվշիցի, Ամա-

տունու և մյուսների) վնասարար-դիվերսիոն աշխատանքի հետևանքները վերացնելու համար։ Դրությունն առանձնապես անբավարար է Ռոստովի շրջեքարշերի վերանորոգման գործարանում, դեպոյի և ուղու տնտեսության մեջ։

Կոնֆերանսն առաջարկում է յերկաթուղու կուսակազմակերպություններին ապահովել տրանսպորտի մասին ՀԿ (բ)Կ Կենտկոմի փետրվարյան Պլենումի արած վորոշումների իսկական բոլշևիկյան կատարումը, տերիտորյալ կուսակազմակերպություններին՝ այդ գործում ամեն կերպ ոգնություն ցույց տալ յերկաթուղայիններին։

Կուսակցական կազմակերպությունները պետք է ամենորյա ուշադրություն հատկացնեն գետային և ծովային տրանսպորտի հարցերին, վորոնք մեր յերկրամասի բեռների և ուղևորների փոխադրումներում բացառիկ կարևոր դեր են խաղում։

Պետք է ուժեղացնել ուշադրությունը դեպի քաղաքացիական ավիացիան։

5. Կոնֆերանսը գնահատելով և հակակուսակցական է համարում տնտեսավարների միջավայրում յեղած այն տրամադրությունները, իբր թե քննադատության և ինքնաքննադատության հետևանքով թուլանում են կարգապահությունը և աշխատողների պատասխանատվության զգացմունքը նրանց հանձնարարված գործի համար։ Հենց թերությունների և սխալների ազնիվ բոլշևիկյան քննադատության պայմաններում դաստիարակվում և աշխատանքային յերկաթյա կարգապահությունը և բարձրանում է պրոլետարական պատասխանատվության զգացմունքն աշխատանքի յուրաքանչյուր տեղամասի համար։ Կոնֆերանսը պահանջում է բոլոր կուսակազմակերպություններից և տնտեսական ղեկավարներից, առաջին հերթին Շախտի կուսակազմակերպությունից, անշեղորեն կենսագործել ածխային Դոնբասի մասին Կենտկոմի և Ժողկոմխորհի կայացրած վորոշումը, վորն անմիջապես վերաբերում է ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերին։ Դեռևս չհայտաբերված տրոցկիստական-բուխարինյան վնասարարների արմատահանման և ջախջախման զուգընթաց, անհրաժեշտ է պայքարել տնտեսավարների և մասնագետների հախուռն վտարանման դեմ, ստեղծելով բոլոր անհրաժեշտ պայմաններն՝ ազնիվ ինժեներատեխնիկական աշխատողների արդյունավետ

աշխատանքի և ստեղծագործական նախաձեռնության լայն հայտաբերման համար։

6. Տնտեսական-արտադրական ակտիվները յեկրամասում անց են կացել ցածր մակարդակով և պահանջված արդյունքը չեն տվել։ Կենտկոմի փետրվարյան Պլենումի վորոշման համապատասխան, տրեստներում և ձեռնարկություններում անհրաժեշտ է ամեն ամիս ապահովել ակտիվի ժողովների գումարումը և այդ ժողովներն անցկացնել քննադատության և ինքնաքննադատության լայն ծավալման հիման վրա։

7. Կոնֆերանսն առաջարկում է Յերկբյուրոյին կազմակերպել յերկրամասի տնտեսական և կուլտուրական շինարարության յերրորդ հնգամյա պլանի խնդիրների լայն քննարկումը, հատուկ ուշադրություն դարձնելով Ազով-Սևծովյան հարստությունների մանրամասն ուսումնասիրման վրա և ոգտագործել նրանց սոցիալիստական շինարարության և մասսաների բարեկեցության հետագա բարձրացման շահերի համար։

VI

1. Կոնֆերանսն առաջարկում է Յերկբյուրոյին և յերկրային ամբողջ կուսակցական

կազմակերպության առաջ կարևորագույն խնդիր է դնում ապահովել գործնականապես իրագործելու գյուղատնտեսության հարցերի վերաբերյալ ընկեր Ստալինի ցուցումները տրված կուսակցության XVII համագումարում—կանոնավոր ցանքաշրջանառության ներմուծում, մաքուր ցելերի լայնացում, սերմային գործի լավացում, տրակտորների և մեքենաների պարկի վերանորոգման ճիշտ կազմակերպում անասնապահության բարձրացում և լավացում։

2. Ամ-տրոցկիստական բլոկը, վորը մի շարք տարիների ընթացքում գործում եր յերկրամասում, հատկապես ուժեղ վնասարարական աշխատանք եր տանում յերկրամասի գյուղատնտեսության մեջ։ Այդ վնասարար աշխատանքը տարվում եր ցանքաշրջանառության վիժեցման, ՄՏ կայանների և կոլխոզների աշխատանքի քայքայման, տրակտորների, կոմբայնների և ավտոմեքենաների պարկի կազմալուծման, անասնապահության կերային բազայի քայքայման, ձիապահության անկման ուղղությամբ։

Կոնֆերանսը նշում է, վոր գյուղատնտեսության յեկամտաբերության և մթերատվության բարձրացման յեռամյա պլա-

նի վերաբերյալ Ցերկրկոմի ոգոստոսյան (1936 թվի) վորոշումն իր մեջ պարունակում եր փաստարարության բոլոր տարրերը, քանի վոր պետական հնգամյա պլանին հակադրված այդ պլանի իրագործման հետևանքով ահագին չափով կրճատվեցին խոտհարքներն ու արոտավայրերը, վորով քայքայվեց անասնապահության կերային բազան։

3. 1937 թվի գարնանացանը վիժեցնելու վերաբերյալ ժողովրդի թշնամիների փորձն իր ժամանակին մերկացվեց և ջախջախվեց։ Գարնանացանի հաջող անցկացումը հանդիսանում է կոլխոզային կարգի հզորության և ուժի անհերքելի վկայություն, փայլուն ցուցանիշ այն բանի, թե յերկրամասի կոլխոզային կազակությունը և բոլոր կոլխոզային մասսաններն ամենամեծ չափով նվիրված են մեր կուսակցության գործին, սոցիալիզմի գործին։

Կոնֆերանսը պարտավորեցնում է Ցերկրկոմին բոլոր միջոցները ձեռք առնել՝ վերացնելու փաստարարության հետևանքները գյուղատնտեսության մեջ, առանձնապես ապահովելով կերային բազայի լայնացումը, անասնապահական սովխոզների և կոլխոզների անասնապահական ֆերմաների աշխատանքի արմատական բարելավումը, տեխնիկական կուլտուրաների, բանջարեղենների ցանքի՝ խաղողագործության, այգեգործության զարգացումը և այլն։

4. Ցերկրային կուսակցական կազմակերպությունը պետք է զորահավաքի բոլոր կոլխոզնիկներին, կոլխոզնիկուհիներին և սովխոզների բանվորներին՝ կատարելու ընկեր Ստալինի պատմական լոզունգը — մոտակա 3—4 տարիներում հասնել տարեկան 7—8 միլիարդ փութ հացահատիկի արտադրության։

Հացահատիկի հավաքումը Ազով-Սևծովյան բոլշևիկների համար հանդիսանում է վճռական քաղաքական քննություն։ Պետք է նկատի ունենալ, վոր դեռ չմերկացված թշնամական թափթուկները կփորձեն վիժեցնել բերքահավաքի աշխատանքները։ Կոնֆերանսն առաջարկում է բոլոր կուսակցական կազմակերպություններին՝ բարձրացնելով մասսաների զգաստությունը և նրանց արտադրական ակտիվությունը, վճռականապես վերացնել բարեհոգության և անհոգության ամենաչնչին տարրերը։

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել կոլխոզնիկների ագրոտեխնիկական

ուսուցման վրա։ Անհրաժեշտ է նաև ամեն կերպ ոգնել մեքենավարներին տեխնիկայի տիրապետման և տրակտորների ու կոմբայնների հզորությունների լիակատար ոգտագործման գործում։

Կոնֆերանսն առաջարկում է Ցերկրկոմին ապահովել Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի անհրաժեշտ նախապատրաստումը, զորահավաքելով յերկրամասի ստախանովականներին և բոլոր կոլխոզնիկներին՝ հասնելու այն ցուցանիշներին, վորոնք հաստատված են կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի և ԽՍՀՄ Ժողկոմխորհի կողմից այդ ցուցահանդեսին մասնակցելու համար։

Կուսակցական և խորհրդային որգանները պետք է ամեն որ հոգան գյուղատնտեսական արտելի Ստալինյան կանոնադրության ճիշտ և անշեղ պահպանման մասին՝ խստորեն դադարեցնելով ներկոլխոզային դեմոկրատիայի խախտման ամենաչնչին փորձերը։

Կոնֆերանսը պարտավորեցնում է բոլշևիկորեն նախապատրաստել և անցկացնել հացահանձումները, աշնանացանը և աշնանավարը, ապահովելով, վոր կոլխոզներն ու սովխոզները ժամանակին կատարեն իրենց պարտավորությունները պետության առաջ և մարտականորեն անցկացնեն դաշտային առաջիկա բոլոր աշխատանքները։

* * *

Ցերկրային կուսակցական կոնֆերանսը կոչ է անում Ազով-Սևծովյան յերկրամասի բոլոր բոլշևիկներին ել ավելի սերտորեն համախմբել իրենց շարքերը մեր կուսակցության լենինյան-ստալինյան կենտկոմի շուրջը, մեծ առաջնորդ և ուսուցիչ ընկեր Ստալինի շուրջը։

Կոնֆերանսը հաստատ համոզված է, վոր յերկրամասի կուսակցական կազմակերպությունները մինչև վերջը կջախջախեն և կվոչնչացնեն ֆաշիզմի ստոր գործակալներին— տրոցկիստական-զինովյեվյան, բուխարինյան լրտեսներին, տեռորիստներին, դիվերսանտներին և վնասարարներին, կուսակցական քաղաքական աշխատանքը կհասցնեն կուսակցության նոր պահանջների մակարդակին, կտիրապետեն բոլշևիզմին և, գլխավորելով Ազով-Սևծովյան աշխատավոր մասսաներին, կոմունիզմի շինարարության գործում առաջ կգնան դեպի նոր հաղթանակներ։

Կոնֆերանսը յերկրաժամի բոլոր բոլշեվիկների անունից հավաստում է լենինյան-ստալինյան կենտկոմին, որ Ազով-Սևծովյան կուսակցական կազմակերպությունը կա և կլինի Լենինի-Ստալինի մեծ կուսակցության կենտրոնական Կոմիտեյի անդրդվելի հենարանը։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ- рм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄԵՍՍԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Ответ. по выпуску **В. К. Варданян**
Тех. редактор **Д. М. Джинибалаян**
Ответ. карректор **С. Акопян**

Уполкрайлит С—4989. Сдано в набор 17 июля 1937 г.
Подписано в печать 26 августа 1937 г. Формат-А С.
Объем $1^1/_2$ п. л. Тираж 1000. Заказ № 1303

Типография Армянского Краевого из-ва „Большевик“ Ростов—Дон, Ворошиловский пр. № 27.

«Ազգային գրադարան»
NL0180800

ԳԻՆԸ 25 կոպ.
Цена 25 коп.

10481
907

На армянском языке

ПОСТАНОВЛЕНИЕ
II Азово-Черноморской Краевой партконференции по отчету Крайкома ВКП(б)

АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ
КРАЕВОЕ АРМЯНСКОЕ
ИЗДАТЕЛЬСТВО „БОЛЬШЕВИК"
Ростов-Д, Ворошиловский пр. № 27